

վերջին փայլփումն է ներկայացնում, աշխատելով վանքի արտաքինը բարեփոխել:

### ՎԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Առաքելոց եկեղեցի.—Մարիամ Սիւնեաց տիկնոջ շինած այս եկեղեցին բարձրանում է ըլլի գագաթին: Շինուած է սև, հասարակ քարից, խակ կաթուղիկէն՝ կարմիր, սրբատաշ քարից: Եկեղեցին խաչաձև է, 13,68 մետր երկարութեան, 10,80 լայն և մօտ 16 մետր բարձրութեան: Չորս որմասիւների վրայ բոլորում են սումանական կամարներ, որոնց վրայ հանգչում է հայկական ցածր կաթուղիկէն:

Ունի մի սեղան և երկու աւանդատուն, որոնցից հիւսիսայինի դուռը գրսից է, խակ ներսում կայ մի պատուհանաձև բացուածք: Աւանդութեան ասելով Մարիամ տիկինը այսպէս է շինել տուել, որ կարողանայ ժամերգութեան ժամանակ ինքն այդտեղ առանձնացած աղօթել, որովհետև իրու կի՞ն իրաւունք չէ ունեցել ճգնաւորների հետ միասին լինելու Սեղանը զարդարուած է խաչկալով, ուր բազմեցրած է խաչելութեան պատկերը: Եկեղեցին լուսաւորում է վեց փոքր և եղ պատուհաններով, որոնցից երկուարգ գտնուում են կաթուղիկէի վրայ: Ունի երկու դուռն, հարաւային և արևմտեան կողմերում: Հարաւային դուռը շինուած է ընկուղենուց, 1,71×0,81 մետր մեծութեան: Թիսագոյն է, և ամբողջ երեսը ծածկուած սքանչելի քանդակներով: Դուռն վերին մասում քանդակուած է չորեքերպեան աթոռը, վերան թիսուս բազմած: Սրաներքն մի ճաճանչաւոր խաչի աջ կողմում կանգնած է Աստուածածինը և Յովհաննէս Մկրտիչը, որոնց անունները նոյնպէս փուրագրուած են պատկերների մօտ: Սրանից ներքն երկու շարքով քանդակուած են ասաներկու առաքեալների պատկերները, որոնց մէջ տեղից թիսաւարած իշխում է ազաւակներպ ս. Հոգին՝ լոյսի ճառագայթներ սփռելով լուսաւորչի, Աշխէն տիկնոջ և Տրդատ թագաւորի վրայ: Մէջ տեղում կանգնած է Աշխէն տիկինը՝ թաղը զլիսին, աջ կողմում Լուսաւորիչ, ձախում Տրդատ՝ խոզի գլխով: Սրանց երկու կողքին առանձին փոքրիկ շրջանակների մէջ քանդակուած են Վրթանէս և Արիստակէս՝ վեղարով և փիլոսով ծունկ չոքած: Այս պատկերների տակ գեղեցիկ ուռուցիկ շրջանակ, որի պատկերը տալիս ենք, առնելով նկարիչ պ. Ֆեթվանեանի ժողովածուից: Դուռն եղրերը պատած են նուրբ քանդակներով, որոնց

միջն գրուած է մի ընդարձակ արձանագրութիւն, որից երեսում է, որ գուռը շինել է Պանարժան Աբրահամը՝ 1521—1557 թուերին Դանիէլ վարդապետի հրամանով:

Առաքելոց եկեղեցու միւս, արևմտեան գուռը ևս շինուած է ընկուզենուց և սեպոյն է, Դուան ամբողջ երեսի վրայ քանդակուած է մի մեծ խաչ՝ ըշջապատուած ծաղկանկար զեղեցիկ քանդակներով: Ինչպէս երեսում է վրայի արձանագրութիւնից՝ շինուած է 1176 փրկ. թուին, Յովհաննէս հիւսի ձեռքով և Թիւրդ իշխանաց իշխանի հրամանով:

Եկեղեցու արևմտեան կողմում բարձրանում է մի գաւիթ, որ այժմ փայտածածկ է, յենած փայտէ սիւների վրայ: Վերջիններին խոյակները բաւական գեղեցիկ են, որովհետեւ սրանց վրայ քանդակուած են թոշուններ, ֆնար, խաչ, անքնեներ և այլն: Դաւթի աջ կողմում զանուռում է խորանաձև մի շէնք: Այս գաւթում ուշագրաւ են չորս մեծ տապանաքարեր, որոնցից այն, որ գտնում է արևմտահիւսիսային անկիւնում, կըում է հետեւալ տապանագիրը. «Այս է հանգիստ պարոն Թուրքայ», Թերեւ այս այն Թիւրդ իշխանի տապանն է, որի հրամանով փրկչական 1176 թուին վերանորոգուել է Առաքելոց եկեղեցու այս գաւթում բացւող արևմտեան գուռը, ինչպէս երեսում է նրա վրայի արձանագրութիւնից:

Ս. Կարասպոսի նկեղեցի. — Բարձրանում է բլրի գաղաթին, Առաքելոց եկեղեցուց փոքր ինչ արևմուաք: Ծինուած է սև, անտաշ քարով, իսկ կաթուղիկէն կարմիր, սրբատաշ քարով, երկարութիւնն է 9,36 մետր, լայնութիւնը 7,20 մետր, և բարձրութիւնը 10 մետր: Եկեղեցին խաչածն է, անսին, ոռմանական կտմարներով և հայկական ցածր կաթուղիկէով, որի մէջ բացւում են չորս փոքրիկ պատուհաններ, Փոքր են նաև միւս երեք պատուհանները, որ բացւում են եկեղեցու պատերի մէջ, Եկեղեցում կայ մի սեղան և միայն մի, ձախակողմեան աւանդատուն: Սիղանը զարդարուած է դաստառակի և Թիւրմատոսի մկրտութեան պատկերներով: Միակ, հարաւային դռան առջն եղել է փայտաշէն մի գաւիթ<sup>1)</sup> որ այժմ քանդուած է:

Կաթուղիկէի վրայի արձանագրութիւնից երեսում է, որ եկեղեցին վերանորոգուել է 1714 թուին:

Ս. Աստուածածնի նկեղեցի. — Սա կառուցուած է կղզու հարաւարեմտեան կողմում տարածուող տափարակի վրայ, և, ինչպէս տեսանը, հիմնարկուած է Մաշտոց վարդապետի ժամանակ Միւնեաց Մարիամ տիկնոջ ծախսով: Եկեղեցին շինուած է սև, սրբա-

1) Շահնամաթունեան. յ. գ. եր. 217.

տաշ քարից, բաղկացած է ժամատնից, մի նորակառոյց զանգակատանից և մի փայտաշէն զաւթից. Ժամատունը օրորոցաձև է, անդմբէթ, 10, 40 մետր երկարութեան, 10 մետր լայնութեան և 9 մետր բարձրութեան. Դրսից ճարտարապետական ոչ մի ուշագրաւ բան չկայ. Ներսից երկու հասարակ, ամբողջական և վեց որմնասիւների վրայ բոլորում են ոռմանական կամարներ և նոյնպիսի կամարակապ ձեղուն: Ուսի մի սեղան և երկու աւանդատուն: Հինգ փոքրիկ և նեղ պատուհաններ աղօտ լոյս են սփռում. սեղանը զարդարուած է գեղեցիկ խաչկալով, և ո. Աստուածածնի պատկերով, որ Աղէքսանդրապօլի «Եսօթը-Նէրք» կոչուած պատկերի ընդօրինակութիւնն է: Խաչկալի առաջ կախուած է մի վարագոյր, որի վրայ մանր կտորեղէններով պատկերներ են հիւսուած, մէջտեղում Քրիստոսի յարութեան, շուրջը՝ առաքեախների: Այս վարագոյրը բաւական գեղեցիկ է և ինքնատիսու Զեղունից կախուած է երկու ջան և բաւականաչափ կանթեղներ: Այս ժամատունը ունի երկու գուռն: —արևմտեանի առաջ չորս սիւների վրայ հաստատուած է մի գեղեցիկ, գմբէթազարդ զանգակատուն, իսկ հարաւայինի առաջ մի հասարակ, փայտաշէն զաւիթ: Ամենօրեայ ժամասացութիւնը այժմ այստեղ է կատարուում:

### Բ. Շ Է Ն Ք Ե Բ

Սկանայ զանքում բացի երեք եկեղեցիներից, կան նաև միքանի այլ շէնքեր, ինչպէս 1) վանահօր բնակարանը, 2) միարանների սենեակները կամ խցերը, 3) ուխտաւորների համար սենեակներ, 4) մառան, խոնանց, փայտատուն և 5) վանական գլաւրոց: Յիշատակուած այս բոլոր շէնքերն էլ տեղաւորուած են կղզու տափարակի վրայ. բլրի վրայ, Առաքելոց և ո. Կարապետի եկեղեցիների մօտ կան մի քանի խարխուլ խցեր, այժմ՝ գործածութիւնից բոլորովին ընկած:

Վանահօր բնակարանը շինուած է սրբատաշ քարից, և գետնի մակերեսոյթից մօտ 2 մետր բարձր է՝ խոնաւութիւնից փոքր ինչ ազատ լինելու: Բաղկացած է մի նախասենեակից, երկար նրբանցքից և չորս փոքրիկ, մաքուր սենեակներից:

Միաբանների սենեակները շինուած են մի շարքով, զարձեալ գետնից 2 մետրաչափ բարձր, սրբատաշ քարով: Սենեակների թիւը տասն է, որոնցից իւրաքանչիւր երկուսը բացւում են մի փոքրիկ նախասենեակի մէջ: Սենեակների առջև տարածւում է մի ընդարձակ պատշտամբ:

Ուխտաւորների ընդունելութեան յատկացրուած սենեակ-

ները շատ խզմալի, հին շէնքեր էին, որ այժմ քանդել են և նորն են կառուցանում:

Թարգափակն շնչը կղզու բոլոր շէնքերից գեղեցիկ է, միայն ափսես, որ գետնից մի փոքր ինչ բարձր չէ շինուած, խոնաւութիւնից փոքր ինչ աւելի ազատ լինելու Մի երկար նրբանցքի մէջ բացում են չորս մեծ, լուսաւոր սենեակներ, որոնցից մինը ծառայում է իրը վանքի զբաղարան-թանգարան:

Իրեն մասն, խոհանոց, փայտաւում ծառայում են հին սեղանատան և հին խցերի փոքր ինչ վերանորոգուած շէնքերը:

### ՎԱՆՔԻ ԱՐԲՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԶԱՐԴԵՐՆ ՈՒ ԱՆՕԹՆԵՐԸ

Վանքի ամենանշանաւոր սրբութիւնը տուրբ նշան կոչուած խաչն է: Սա երկաթէ մի մեծ խաչ է, կենդրունում, ապակու տակ ամփոփուած խաչափայտի մասից:

Աւանդութեան ասելով այս խաչը շինուած է այն կոնքի կտորից, որի մէջ Աւատուածածինը լողացրել է Մանուկ Յիսուսին: Թաղէսս առաքիալը այդ կոնքից տառանց զործիքից երեք խաչ է պատրաստել, որոնցից մինը սա է, երկրորդը գտնւում է Նախիջևանի գաւառի Երնջակայ ո. Կարապետի վանքում և կոչւում է Հազարափրկիչ, խեկ երրորդը՝ Անքանի նահանգի Գրիգորոպոլ քաղաքում, ուր տարել են Անիից զաղթող ժողովուրդը:

Սևանայ վանքի այս սուրբ նշանը կոչւում է նաև կոթայ սուրբ նշան, մի առմամանակ Գեղարքունիքի Կոթայ վանքում պահուած լինելու պատճառով: Այս խաչը միասմամանակ էլ պահուել է Հայոց Յովհաննու կամ Մարդարաւանեաց վանքում, ուր նրա դործած հրաշքի նկարագրութիւնը կը պատմենք նոյն վանքի ստորագրութեան մէջ: Ոչ միայն բազմաթիւ ուխտաւորներ են գալիս Սևան սուրբ նշանը համբուրելու, այլ և զրեթէ ամէն տարի հասարակական մի գժեախտութեան, համաճարակների, հարաշտութեան, կարկանդակ և այլ ժամանակ ժողովուրդը գալիս տառնում է ո. Նշանը՝ զիւղերում անդաստան կատարելու:

Բացի այս հռչակուած տուրբ-նշանից՝ Սևանում կան նաև հետեւեալ խաչեր.

Արծաթէ, ոսկեզօծ մի խաչ, որի մէջ կայ կենաց փայտից մի մասն. սրբ մասին մի աւանդութիւն ասում է թէ Աշոտ թագաւորի Մաշտոց վարզապետին տուածն է, մի ուրիշ աւանդութիւն Սիւնեաց Բիւրեղ տիկնոջ Հերակլ Յոհանց կայսրից ստացած խաչափայտի մի մասն է համարում: Նոյն խաչափայտի մի